ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՀ պետական եկամուտների կոմիտեի 2021 թվականի մարտ ամսվա գործունեության վերաբերյալ

Ընթացիկ աշխատանքներ

Նախնական տվյալներով 2021 թվականի առաջին եռամսյակի ընթացքում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 4,779.3 մլն դրամ՝ պլանավորված 3,300.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 44.8 տոկոսով կամ 1,479.3 մլն դրամով:

Մարտ ամսում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 1,962.8 մլն դրամ՝ պլանավորված 700.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 2.8 անգամ կամ 1,262.8 մլն դրամով:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում գրանցվել (հաշվառվել) է թվով 150, լուծարվել՝ 19 տնտեսավարող սուբյեկտ:

Կատարվել է 1 ստուգում, որի արդյունքում լրացուցիչ հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ չեն հայտնաբերվել:

Նույն ժամանակահատվածում կատարվել են թվով 113 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 69-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 17-ը՝ հարկային հաշվանցումների և վերադարձի հիմնավորվածության, 15-ը՝ ավելացված արժեքի հարկի հաշվարկի ճշտության և 12 այլ ուսումնասիրություններ:

Մարտի 15-ից գործարկվել է նոր հսկիչ կետ, որի կողմից արձանագրված տվյալների համաձայն՝ մարտի 15-ից մինչև 31-ը ներառյալ հանրապետության տարածք են ներմուծվել 5,348.1 մլն դրամ գումարի չափով ապրանքանյութական արժեքներ, արտահանվել՝ 5,195.6 մլն դրամ գումարի չափով ապրանքանյութական արժեքներ:

«Հարկային և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» օրենքի համաձայն՝ 5,603 հարկ վճարողներ ազատվել են 2,947.2 մլն դրամ գումարի չափով ապառքներից, 3,353.4 մլն դրամ գումարի չափով տույժերից և տուգանքներից: 109 հարկ վճարողների հետ կնքվել են պարտավորությունների աստիճանական մարման ժամանակացույցեր, որոնցով նախատեսված պարտավորությունները մարելու դեպքում կազատվեն 1,090.0 մլն դրամ գումարի

չափով ապառքների վճարումից, ընդ որում՝ ժամանակացույցերից 23-ը կնքվել են 12-ամսյա տևողությամբ, 20-ը՝ 24-ամսյա տևողությամբ, 34-ը՝ 36-ամսյա տևողությամբ և 32-ը՝ 48-ամսյա տևողությամբ:

Պատերազմական գործողությունների հետևանքով բացառապես Ադրբեջանի կողմից օկուպացված համայնքներում փաստացի գործունեություն իրականացրած 521 հարկ վճարողների տրամադրվել են շուրջ 197 մլն դրամ գումարի չափով հարկային և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններ:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել է 7,015 հաշվարկ-հաշվետվություն, որից էլեկտրոնային եղանակով՝ 6,229:

Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 43 պայմանագրեր:

Հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձի գործընթացի շրջանակներում մարտ ամսում կատարվել է վերադարձ 20 վարձու աշխատողի՝ 4.7 մլն դրամի չափով:

Եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով գործունեությունը նոր սկսող 7 հարկ վճարողների տրամադրվել են հավաստագրեր:

Արցախի Հանրապետության ռեզիդենտ ոչ պետական կազմակերպություններին տրամադրվող պետական աջակցության միջոցառման շրջանակում հունվար ամսվա հաշվարկված և վճարված եկամտային հարկի չափով աջակցություն է տրամադրվել 677 հարկ վճարողի՝ 183.8 մլն դրամ գումարի չափով:

Մշակվել և ԱՀ կառավարության հաստատմանն են ներկայացվել «Ծխախոտի արտադրանքի առավելագույն մանրածախ գինը մակնշելու կարգը սահմանելու մասին», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի մայիսի 26-ի N 306-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին», «Պատերազմական գործողությունների հետևանքով բացառապես Ադրբեջանի Հանրապետության վերահսկողության տակ անցած համայնքներում փաստացի գործունեություն իրականացրած՝ հարկային և այլ պարտադիր վճարների գծով չվճարված պարտավորությունների կատարումից ազատվող առևտրային կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի ցանկը հաստատելու մասին», «Լեռնային Ղարաբաղի

Հանրապետության կառավարության 2000 թվականի հուլիսի 31-ի N 152 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» և «Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունվարի 18-ի N 9-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշումների նախագծերը:

ԱՀ ՊԵԿ նախագահի հրամաններով հաստատվել են «Անհատ ձեռնարկատիրոջ կողմից արտոնությունից հրաժարվելու վերաբերյալ» հայտարարության ձևը, «Եկամտային հարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման տեղեկատվական բազայում բացված՝ ֆիզիկական անձի անհատական հաշվի քաղվածքը դիմումի հիման վրա փաստաթղթային կամ էլեկտրոնային տեսքով տվյալների սուբյեկտին տրամադրելու» կարգը, մի շարք հարկային հաշվարկների ձևեր համապատասխանեցվել 2021 թվականի հունվարի 1-ից հարկային հարաբերությունները կարգավորող օրենսդրական դրույթներում կատարված փոփոխություններին:

Ուսումնասիրվել են պետական կառավարման այլ մարմինների կողմից ներկայացված իրավական ակտերի նախագծերը:

Մարտի 19-ին կայացել է աշխատանքային այցով Արցախի Հանրապետություն ժամանած ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահ Էդվարդ Հովհաննիսյանի գլխավորած պատվիրակության հանդիպումը ԱՀ պետական եկամուտների կոմիտեի ղեկավար կազմի հետ, որի ընթացքում քննարկվել են Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմական գործողությունների հետևանքով հարկ վճարողների մոտ առաջացած խնդիրներն ու համագործակցության ծրագրի շրջանակներում իրականացվող աշխատանքների ընթացքը:

Հաշվետու ամսում երկու կառույցների միջև իրականացվել են ԱՀ հարկ վճարողների կողմից ՀՀ մաքսային սահմանով կատարված ներմուծումների, արտահանումների, ՀՀ և ԱՀ սուբյեկտների միջև իրականացված գործարքների, անուղղակի հարկերի հաշվանցումների, ինչպես նաև հարկման հիմք հանդիսացող այլ փաստաթղթերի ու տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

Հասարակայնության հետ կապ

2021 թվականի առաջին եռամսյակում հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կազմակերպվել է 594 տնտեսավարող սուբյեկտների ընդունելություն, որոնց արդյունքում պարզաբանվել են վերջիններիս հուզող հարցերը:

Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով շարունակվել են հանրային իրազեկման աշխատանքները:

Մարտ ամսվա ընթացքում հարկային մարմին է մուտքագրվել 412, ելքագրվել՝ 162 նամակ-գրություն, որոնք ընթացքավորվել են ըստ գործող կարգի, այդ թվում՝ հարկային օրենսդրության դրույթների պարզաբանման նպատակով ներկայացվել է 5 գրություն: